

«ԱՂԲԻՒՐԻ» ՅԱՒԵԼԻԱԾ

ՏԱՐԱԾԸ ԼՈՑՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՇԱԲԱԹԸ ՄԻ ԱՆԳԱՄ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ

№ 42 Կիրակի 31 Հոկտեմբերի | Չորրորդ տարի 1893

ԲԱՑԻԱՌ Է «ՏԱՐԱԾ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԵՐԿԱՄԵԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ.

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՅՈՒՆԻԱՐԻ 1-Ը ԱՐԺԷ **ՄԷԿ** ՌՈՒԲԼԻ

ՀԱԿԱՄԱՆԿԱՎԱՐԱԿԱՆ ՎԱՐՄՈՒՆՔ

—

Հազիւ թէ գոնէ մէկը՝ ուսեալ թէ անուս՝ հարուստ թէ աղքատ, գիւղացի թէ քաղաքացի, որ ըմբռնած չըլինի, որ փորձով համոզուած չըլինի թէ՝ ինչ մեծ դեր է խաղում մանուկների բարոյական-կրթութեան գործի մէջ լաւ ու վատ օրինակի նշանակութիւնը։

Վերջին գեղջկուհին գիտէ, որ վատ օրինակ տեսնելով—երեխան փչանում է, լաւը տեսնելով—լաւանում է։

«Երեխան ինչ որ կըտեսնի, այն էլ կըսովորի», կասէ ձեզ վերջին ռամիկը։ «Ձին իշի մօտ կապուած լինելով—«աքացի տալն է սովորում»—ասում է ռամկական առածը։

Այլ հարց է ի հարկէ թէ լաւ կամ վատ օրինակ ասելով—ով ինչպէս է հասկանում այդ։

Աշդի մանկավարժութիւնը օրինակի ազդեցութիւնը համարում է բարոյական կրթութեան հիմնաքարերից մինը։ Ուրիշ կերպ էլ չէր կարող լինել։

Մանուկի բնաւորութեան կազմութիւնը հիմնւում է այն արտաքին և ներքին տպաւորութիւնների վրայ, որ նա ստանում է շրջապատող աշխարհից. մանուկի զգայարանքները ընդունելով այս կամ այն տպաւորութիւնը՝ հաղորդում են նրա նեարդային սիստեմին. այդ տպաւորութիւնների գումարիցն է առաջանում մանուկի բնաւորութիւնը։ Ամեն մի երևոյթ, ամեն մի օրինակ տպաւորութիւն է գործում մանուկի ներքին աշխարհի վրայ. ահա ինչու ամեն մի դաստիարակողի պարտականութիւնն է երեխային հեռու պահել այն տեսակ օրինակներից, որոնք մեր կեանքի մէջ ճանաչւած են իբրև վատ, վնասակար և այլն։ Վատ կամ լաւ օրինակների ազդեցութիւնն այնքան մեծ է լինում, որ ոչ միայն երեխաների և պատանիների, այլ մինչև անգամ երբեմն հասակ առած մարդկանց բնաւորութեան փոփոխելու վրայ են ներգործում։

Նայեցէք չորս կողմը—ուշադրութիւն դարձրէք՝ ինչպէս խանութպանի փոքրիկ տղաները իր տիրոջ վարք ու բարքն է իրացնում և մինչև անգամ նրա ձայնով և ձևով խօսում. նայեցէք երկար ժամանակ կեանքը միասին անցկացրած զոյգ ամուսիններին, երբեմն որչափ են նմանւում իրար, կարծես մէկ մօրից ծնւած քոյր և եղբայր լինեն...

եթէ օրինակներ փնտրելու լինենք, շատ կըգտնենք։

Ջանի որ այս այսպէս է, դէ ինչ անուն տանք մենք այն մեր մանկավարժ-ուսուցիչների վարմունքին, որ յաճախ մեր աչքին են ընկնում։ Աշակերտների հետ ամենայիմար կատակներ անել, ծաղրական և անվայել անուններով մկրտել սաներին—լօքօ, խոզի ճուտ, հաստագլուխ, կինտօ, նզովեալի ծնունդ և այլն և այլն, լիշոցներ տալ նրանց, ասացէք խնդրեմ ինչ օրինակ կարող է լինել ուսանող երեխայի համար։ Չէ որ դա ամենազզուելի օրինակ է աշակերտներին—էլ չենք ուզում կանգ առնել այն բանի վրայ թէ այդ տեսակ լիշոցներ տալով ինչ վնաս են հասցնում մեր ուսուցիչները։ Մեզ կարող են նկատել, որ դրանք վաղուց անցած բաներ են, որ այդ տեսակ ուսուցիչներ մենք այժմ չունենք... Երանի՛ թէ այդպէս լինէր։ Մի՛ևնոյնը լսում են ներկայումս նոյն իսկ երրորդ-չորրորդ դասատան սաներն իրանց համալսարանական վարժապետ—դաստիարակների բերանից։

Բաւական չէ, որ դաստատուն կարծէ թէ ինքը պարտաւոր է միմիայն իր ստանձնած առարկան աւանդել աշակերտներին, այլ նա սեպուհ պարտաւորութիւն պէտք է համարի և օրինակելի լինել ամեն մի դէպքում ու հանգամանքում իր սաների համար, իրան բարձր պահէ բարոյապէս, որ իր պաշտօնի ամենագլխաւոր պահանջն է։

Բացի այդ՝ մենք ուզում ենք այստեղ կանգ առնել և մի այլ հակամանկավարժական վարմունքի վրայ։ Կան ուսուցիչներ, որոնք անգիտակցաբար զարգացնում են աշակերտների մէջ ինքնահաւանութիւն, ինքնասիրութիւն, բարձրից նայելու սխտը իր ընկերների վրայ և ինչո՞վ—դարձեալ իրանց վատ օրինակներովը։

Վերոյիշեալ բացառական յատկութիւններ ունեցող պատանիներ հարիւրներով կարելի է թւել և դրանք արժանի աշակերտներ են արժանի վարժապետներին։

—Երւանդ, արի փոքր ինչ թւաբանութեամբ պարապենք, դասագիրքը բեր խնդիրներ վճռենք։

—Է՜հ, չարժէ այսպիսի անպիտան դասագիրք, որը լիքն է անթիւ սխալ խնդիրներով, գործածել։

—Ի՞նչպէս թէ անպիտան դասագիրք, ինչ ես ուզում դրանով ասել։

—Անցեալ օրը մեր վարժապետը երեք խնդիր վճռեց միմեանց ետևից, երեքն էլ սխալ դուրս եկաւ և վարժապետը զայրանալով՝ դասագիրքը տափովը տւեց. աւելացրեց միևնոյն ժամանակ, որ դասագիրք կազմողները դեռ իրանք չըգիտեն թւաբանութիւնը կանոնաւոր կերպով և յանդգնել են թւաբանական դասագրքեր յօրինել։

Ընդունենք սակայն, որ դասագիրքն իր շատ պակասաւոր կողմերն ունի. բայց մի՞թէ հաւատալու բան է, որ նոյն գրքի մէջ չեն գտնւում լաւ և անսխալ կազմած խնդիրներ։ Եւ ինչ հարկ կար արդեօք սխալ խնդիրներ լուծելով զբաղել և ժամավաճառ լինել, քանի որ կարելի էր շատ հեշտ կերպով անսխալ խնդիրներ լուծել և աշակերտներին բան ուսուցանել։ Մենք համոզւած ենք խորին կերպով, որ պարոն դաստատուն դիտմամբ է ընտրել սխալ խնդիրները, որպէս զի իր աշակերտներին ցոյց տայ թէ տեսէք՝ որքան նշանաւոր թւաբանագէտ եմ, որ դասագրքի սխալներն եմ գտնում. աշակերտների առաջ փքւել—պարծենալը կատարեալ տխմարութեան նշան է։

Լաւ և բարեխիղճ վարժապետը միշտ կարող է օգտւել նոյն իսկ ամենաանշնորք կերպով յօրինւած դասագրքերից և պէտք չունի բոլորովին արհամարանքով վերաբերւել իր ընկերակիցների աշխատութեանցը, այն էլ աշակերտների առաջ. այդ կատարեալ անտաշութիւն է։ Առաւել ցաւալին այն է, որ այսպիսի վարժապետները տարիներով միևնոյն առարկան դասաւանդելով և շարունակ ուրիշների աշխատանքներից օգտւելով բոռերի և իշամեղուների նման, դեռ յանդգնում էլ են դժգոհելու դասագիրք յօրինողներից։ Ի՞նչի կամ ինչ իրաւունքով։ Պարոն վարժապետներ, դժգոհ էք եղած դասագրքերից, կազմեցէք ինքներդ նորերը և աւելի կատարեալները, կամ թէ հրապարակապէս խոստովանեցէք ձեր անընդունակութիւնը, հեռացէք ասպարէզից և հաւատացած եղէք, որ ձեր տեղը աւելի ընդունակ և ազնիւ մարդիկ կը կատարեն վարժապետական վեհ պաշտօնը։ Եւ ոչ թէ վերցնելով ընկերակցի աշխատութիւնը՝ վարենաբար շպրտել դասատան մի անկիւնն աշակերտների ներկայութեամբ։ Այդ տեսակ օրինակ տեսնող աշակերտները կարող են նմանւել միմիայն իրանց ուսուցիչներին։ Ահա՛ որտեղից է ծնունդ առնում մեր ինքնահաւան, կոպիտ և անտաշ երիտասարդների լեգիօնը։

ՄԿՐՏ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

---

* * *

Մենակ, անընկեր ձեր գիրկն եմ ընկել
Կենսական ծովի ահեղ պտոյտներ,
Սիրտս լի յոյսով,
Լի ցնորքներով

Ես պիտի պատռեմ ձեր հզօր կուրծքը,
Ես պիտի թռչեմ դէպ սուրբ օրրանը
Իմ վէհ խոհերի,
Վառ ձգտումների։
Պատ՛ոյտք, կատաղիր, ալիք, շառաչիր,
Օ՛ սիրտ իմ, սիրտ իմ,—տակ՛ ու կանգնիր
Ծայռի պէս ամո՛ւր
Ցօղի պէս մաքո՛ւր...

—

Թող անծիր ծովը եռայ, փրփրի,
Թղլոտ երկինքը կայծակներ շաղ տայ,
Եւ թող փարոսը մշուշում թաղուի,
Փրկարար ափը աչքիս չերևայ՝
Չեմ յուսահատի։
—Չէ՞ որ դուք միայն
Վսեմ իդէալներ,
Կուսական հոգու
Նուիրական սէր,
Չէ՞ որ դուք միայն, երկնային ուժեր,
Ինձ սուր էք տալիս անյաղթ կռուելո՛ւ,
Ինձ թև էք տալիս անխոնջ թռչելո՛ւ,
Ինձ յոյս էք տալիս անվերջ տակալո՛ւ...

1893 Թ. 7 օգոստոսի.
Վիեննա.

ԱՒ. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ՀԻՆ ԵԳԻՊՏՈՍԻ ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

ԲՕԼԵՍԼԱՒ ՊՐՈՒՍԻ

—

Տեսէք, թէ որքան ունայն են մարդկային յոյսերը համաշխարհային կարգերի առաջ, տեսէք, թէ որքան ունայն են նրանք այն օրէնքների առաջ, որոնց կրակէ նշաններով գծել է երկնքի վրայ Յաւիտենականը։

Եգիպտոսի ամենակարող պետը-Հարիւրամեայ Ռամզէսը, մեռնում էր։ Այն հզօրին, որից կէս դար շարունակ դողում էին միլիոնաւոր մարդիկ, արդէն խեղդում էր մահը և ծծում էր նրա սրտից արիւն, թիկունքներից ոյժ և, մերթ ընդ մերթ, մինչև անգամ նրա ուղեղից գիտակցութիւն։ Ինչպէս մի խորտակուած կեդր, ընկած էր մեծ փարաւօնը հրնդկական վագրենու վրայ, ծածկելով իր ոտները եթովպական թագաւորից աւար առած թիկնոցով։ Եւ նա, որը մինչև անգամ խիստ էր իրան հետ, կանչեց Կարնակի տաճարի ամենահմտաուն բժշկին և հարցրեց.

—Ես գիտեմ, որ քեզ ծանօթ են այն ուժեղ դեղերը, որոնք կամ յանկարծակի սպանում, կամ իսկոյն բժշկում են։ Պատրաստիր նրանցից մէկը իմ հիւանդութեան համեմատ և թող ամեն բան վերջանայ այսպէս կամ այնպէս։

Բժիշկը տատանւում էր։

—Յիշիր, Ռամզէս, ասաց նա շշնջալով, այն ժամանակից, ինչ դու իջել ես բարձր երկնքից, Նեղոսն արդէն դուրս է եկել իր ափերից հարիւր անգամ։ Կարո՞ղ եմ արդեօք տալ քեզ մի դեղ, որը մինչև անգամ քո զինուորներից ամենաերիտասարդի համար վտանգաւոր է։

Ռամզէսը բարձրացաւ իր մահճի վրայ։

—Ջուրմ, գոռաց նա, երևի ես շատ եմ հիւանդ, որ դու յանդգնում ես ինձ խորհուրդներ տալ։ Լռիր և կատարիր այն, ինչ քեզ հրամայում եմ։ Չէ՞ որ կենդանի է իմ երեսնամեայ թոռը՝ Գորուսը։

Եւ երբ քուրմը դողդողացող ձեռքերով դեղը մօտեցրեց Ռամզէսին, Ռամզէսն ըմպեց, ինչպէս ծարաւածը դատարկում է ջրով բաժակը. յետոյ նա կանչեց Թէբէի ամենալալտնի աստղագէտին և հրամայեց ասել ճշմարտօրէն, թէ ինչ են նախագուշակում աստղերը։

—Լուսնթագը միացել է լուսնի հետ, ասաց իմաստունը, և այդ բանը գուշակում է, որ քո ցեղից մի մարդ պիտի մեռնի, Ռամզէս։ Գու՞ վատ արեցիր, որ խմեցիր այն դեղը, որովհետև զուր են մարդկային չանքերը այն հրամանների դէմ, որոնք գծած են Յաւիտենականի ձեռքով երկնքի վրայ։

—Հաւատում եմ, որ աստղերը գուշակում են մահս, պատասխանեց Ռամզէսը։ Բայց ճրը պիտի նա գայ,—դիմեց նա բժշկին։

—Արևի ծագելուց առաջ դու, Ռամզէս, կամ առողջ պիտի լինես ընկեղջիւրի նման, կամ քո սրբազան մատանին արդէն անցած պիտի լինի քո թոռանը՝ Գորուսին։

—Իջրէք Գորուսին փարաւօնների դահլիճը, ասաց Ռամզէսը արդէն թուլացած ձայնով։ Թող նա այնտեղ սպասէ իմ վերջին խօսքերին և մատանուն, որպէս զի իմ և նրա թագաւորութիւնների մէջ ընդմիջում չըլինի։

Արտասւեց Գորուսը (նա փափուկ սիրտ ուներ) իր պապի մօտալուտ մահուան վրայ. բայց որպէս զի երկուսի թագաւորութիւնների մէջ ընդմիջում չըլինէր, նա, շրջապատուած բազմաթիւ պալատականներով, մտաւ փարաւօնների դահլիճը։

Նա նստեց պատշգամբի վրայ, որի մարմարէ սանդուղքները իջնում էին ցած, մինչև գետը, և վշտահար դիտում էր այնտեղից շրջակայքը։

Այդ ժամանակ լուսինը, որի լուսի տակ պըս-

պղին էր տալիս չարագուշակ լուսնթագը, ոսկեզօծեց Նեղոսի մռայլ ջրերը, մարգագետինների և պարտէզների մէջ գծագրեց հսկայական բուրգերի սուերները և իր լոյսը տարածեց ամբողջ հովտի մէջ մի քանի մղոն տարածութեան վրայ։ Զընայելով որ ուշ գիշեր էր, խրճիթներում ու շատ տներում կրակները էին վառւած, իսկ բնակիչները դուրս էին եկել բակերն ու փողոցները։ Նեղոսի վրայ լողում էին բազմաթիւ նաւակները, կարծես թէ մի որևէ տօնի առիթով. տրմաւեռու անտառներում, գետի ափերով, հրապարակներում ու փողոցներում, Ռամզէսի պալատի շուրջը խռնւում էր ահագին ժողովուրդ։ Եւ չընայելով դրան՝ այնպիսի անդորրութիւն էր տարածւած, որ լսւում էր գետի եղեգնի սօսափիւնն ու որս որոնող բորենիների ոռնոցը։

—Ինչու՞ է այսքան ժողովուրդ հաւաքւել, հարցրեց Գորուսը պալատականներից մէկին։

—Նրանք ուզում են ողջունել քեզ, տէր, իբրև նոր փարաւոնին և լսել քո շրթունքներից այն բարեգործութիւնների մասին, որ դու որոշել ես նրանց համար։

Եւ առաջին անգամ իշխանի սիրտը բաղխեց վեհութեան գոռոզութիւնը, ինչպէս ժայռերին բաղխում է ծովի ալիքը։

—Իսկ այն կրակներն ի՞նչ են՞ նշանակում, շարունակեց հարցնել Գորուսը։

—Հուրմերը գնացել են քո մայր Զեփիւռի դամբարանը, որ այնտեղից հանեն նրա նշխարները ու հանգչեցնեն փարաւոնների կատակոմբում։

Գորուսի սրտում նորից զարթեց վիշտ մոր մասին, որի նշխարները՝ նրա տարուկներին արած բարեգործութիւնների համար՝ Ռամզէսի հրամանով հանգեցրած էին տարուկների մէջ։

—Գիանների խրխնջոց եմ լսում, ասաց Գորուսը ուշադրութեամբ ականջ դնելով. ով է գընում այսպէս ուշ։

—Բարձր խորհրդականը մունետիկներ է պատրաստում քո ուսուցիչ Յեսրոնի մօտ ուղարկելու, տէր։

Գորուսը հառաչեց յիշելով իր մեերիմ ուսուցչին, որին Ռամզէսն արտաքսել էր երկրից այն բանի համար, որ նա Ռամզէսի թոռան սրտում զարթացնում էր պատերազմների դէմ զզւանքի և հալածւած ժողովրդին ցաւակցելու զգացմունքները։

—Իսկ ի՞նչ է այն ճրագը, Նեղոսից այն կողմ։

—Այդ կրակով, ով Գորուս, ողջունում է քեզ բանակից քո հաւատարիմ Վերոնիկան։ Արդէն քըրմապետն ուղարկել է նրա մօտ փարաւոնների մայկը, և երբ սրբազան մատանին կըփայլի քո մատում, այն ժամանակ կըբացւեն բանտի ծանր դռները, և կը վերադառնայ քեզ կարօտած և քեզ սիրող Վերոնիկան։

Գորուսն երբ այս խօսքերը լսեց, այլ ևս բան չըհարցրեց. նա լռեց և ձեռներով ծածկեց իր աչքերը։

Յանկարծ նա տնքաց ցաւից։

—Ի՞նչ պատահեցաւ քեզ, Գորուս։

—Մեղուն ոտս խայթեց, պատասխանեց ժժդուհած Գորուսը։

Պալատականը լուսնի կանաչին տուղ լուսնի տակ տնդղեց նրա ոտքը։

—Շնորհակալ եղիր Օզիրիսից, որխայթողը սարդ չի եղել, նրանց թոյնն այս ժամանակ մահացու է լինում։

Օ՜, որքան ունայն են մարդկային յոյսերն երկնային անջնջելի հրամանների դէմ...

Այդ ժամանակ մտաւ զօրքերի ընդհանուր հրամանատարը և գլուխ տալով Գորուսին, ասաց.

—Մեծ Ռամզէսը, զգալով, որ արդէն սառչում է նրա մարմինը, ուղարկեց ինձ քեզ մօտ և հրամայեց. «Գնա Գորուսի մօտ, որովհետև ես այլ ևս երկար չեմ ապրելու և կատարիր նրա ամեն մի հրամանը, ինչպէս դու կատարում էիր իմս։ Թէկուզ նա հրամայի յանձնել վերին Եգիպտոսը եթովպացիներին և եղբայրական դաշնակցութիւն կապել այդ թշնամիների հետ, կատարիր, երբ կըտեսնես իմ մատանին նրա մատում, որովհետև փարաւոնների բերանով խօսում է անմահ Օզիրիսը»։

—Ես չեմ ուզում տալ Եգիպտոսը եթովպացիներին, ասաց իշխանը, բայց կըվերականգնեմ խաղաղութիւնը, որովհետև ես խնայում եմ ժողովրդի արիւնը։ Երիր իսկոյն հրովարտակ և պատրաստ պահիր հեծեալ մունետիկներ, որ հէնց որ կըփայլեն կրակներն ի պատիւ իմ, նրանք սլանան հարաւի աշխարհը և յայտնեն իմ ողորմածութիւնն եթովպացիներին։ Երիր մի այլ հրովարտակ, որ այս ժամից մինչև յաւիտեան պատերազմի դաշտում ոչ մի գերուս լեզու կտրել չի կարելի։ Այսպէս եմ ես հրամայում...

Զօրքերի հրամանատարը գլուխ տւեց և հեռացաւ, որ գրի հրովարտակները. իսկ իշխանը հրամայեց պալատականին նորից տնդղել իր վէրքը, որովհետև ոտքը սաստիկ էր ցաւում։

—Ո՜ւ ոտը փոքր ինչ ուռել է, Գորուս, ասաց պալատականը։ Ի՞նչ պէտք է անենք, եթէ մեղրի տեղ քեզ սարդ է կծել։

Դահլիճ մտաւ պետական կանցլերը և խոնարհւելով իշխանի առաջ՝ ասաց.

Կաթոլիկ կոյսը Երուսաղէմում.

—Հզօր Ռամզէսը տեսնելով, որ արդէն խաւարում են նրա աչքերը, ուղարկեց ինձ քեզ մօտ և այսպէս հրամայեց. «Գնա, Գորուսի մօտ և համարձակ կատարիր նրա բոլոր կամքը։ Թէկուզ նա հրամայի ազատել բոլոր ստրուկներին և բաժանել նրանց մեր աշխարհը, կատարիր, եթէ տեսնես նրա ձեռքին իմ մատանին, որովհետև փարաւոնների բերանով խօսում է անմահ Օզիրիսը։

—Այդպէս հեռու չի ձգտում իմ սիրտը, պատասխանեց Գորուսը։ Բայց իսկոյն հրովարտակ գրիր, որով կիսով չափ պակասում է երկրի տուրքը և հարկերը ժողովրդի համար, որ ստրուկները շաբաթ երեք օր ազատ են աշխատելուց, և որ առանց դատի նրանց փայտով ծեծել արգելւում է։ Գրիր նոյնպէս հրաման, որով վերադառնում է իմ Յետրոն ուսուցիչը, Եգիպտացիներից ամենաիմաստունն ու ամենաազնիւը։ Այդպէս եմ ես հրամայում.,.

Կանցլերը գլուխ տւեց, բայց նրա հեռանալուց առաջ մատւ քրմապետը։

—Գորուս, ասաց նա, ամեն մի րոպէ մեծ Ռամզէսը կարող է ուրւականների աշխարհը տեղափոխել և նրա սիրտը կշռւել Օզիրիսի անսխալ կշեռքով։ Եւ երբ սրբազան մատանին փայլի քո մատի վրայ, հրամայիր և ես կրկատարեմ ամեն բան, թէկուզ ցանկանաս Ամմոնի հրաշագործ տաճարը կործանել, որովհետև փարաւոնների հրամանով խօսում է անմահ Օզիրիսը։

—Ոչ թէ կործանել, այլ նոր տաճարներ պիտի կանգնեմ և բազմացնեմ սրբազան դանձերը։ Ես ցանկանում եմ միայն, որ դու հրովարտակ գրես իմ մայր Զեփիւռի նշխարները հանդիսաւոր կերպով կատակօմբները տեղափոխելու, և մի այլ հրովարտակ ազատելու Վերոնիկային բանտից։ Այդպէս եմ ես հրամայում...

Դու իմաստուն կերպով ես սկսում, ասաց քրմապետը։ Այդ հրովարտակները կատարելու համար ամեն բան արդէն պատրաստ է, իսկ հրովարտակները ես իսկոյն կըգրեմ։ Հէնց որ ձեռքիդ մէջ կըփայլի մատանին, ես կըհրամայեմ, որ վառեն ահա այդ ջահերը՝ աւետելու ժողովրդին ողորմածութիւն, իսկ քո Վերոնիկային ազատութիւն և սէր։

Մտաւ Կարնակի ամենաիմաստունը բժիշկը։

—Գորո՛ւս, ասաց նա, ինձ չէ զարմացնում քո տժգունութիւնը, որովհետև մեռնում է քո պապը։ Նա չըկարողացաւ տանել ուժեղ դեղի ներգործութիւնը։ Նրա մօտ է մնացել միայն իմ օգնականը, որ Ռամզէսի մեռնելուն պէս՝ հանի նրա մատից մատանին և քեզ յանձնի իբրև նշան քո անսահման իշխանութեան։ Բայց դու աւելի ու աւելի ես տժգունում, Գորուս... աւելացրեց նա։

—Տնդղիը ոտս, հառաչեց Գորուսն ու ընկաւ ոսկէ բազկաթոռի մէջ, որի բազուկները փորագրւած էին բազէի ձևով։

Բժիշկն ընկաւ ծնկան վրայ, տնդղեց ոտը և սարսափահար յետ ցնցւեց։

—Գորուս, շշնչաց նա, քեզ խայթել է մեծ նաթուհնաւոր սարդը...

—Մթթէ ես պիտի մեռնեմ, այսպիսի մի ժամին, հարցրեց Գորուսը հազիւ լսելի ձայնով։

Եւ յետոյ աւելացրեց.

—Շուտո՛վ պիտի այդ պատահի... Ա՜խ ինձ ճշմարիտը...

—Աւելի առաջ, քան լուսինը կըթագնի այս արմաւենու ետևը։

—Ա՜խ, այդպէս է... իսկ Ռամզէսը երկա՞ր պիտի ապրի։

—Չըգիտեմ... գուցէ արդէն բերում են քեզ նրա մատանին...

Այդ րոպէին մտան նախարարները՝ ձեռքերին պատրաստ հրովարտակներ։

—Կանցլե՛ր, գոռաց Գորուսը, բռնելով նրա ձեռքը. եթէ ես հիմա մեռնէի, կըկատարէի՞ք իմ հրովարտակները։

—Ա՛յլ բան, Գորուս, մինչև քո պապիդ տարիքին հասնելը։ Բայց եթէ դու մինչև անգամ նրա մահից յետ իսկոյն ներկայանաս Օզիրիսին, քո ամեն մի հրամանը կատարւած կըլինի, միայն թէ դիպչի քո մատը սրբազան մատանուն։

—Մատանո՛ւն, կրկնեց Գորուսը, իսկ ե՞րբ նա...

—Ինձ ասաց պալատականներից մէկը, շշընջաց զօրքերի ընդհանուր հրամանատարը,—որ մեծ Ռամզէսը փչում է արդէն իր վերջին շունչը։

—Ես պատւիրեցի իմ տեղակալին, աւելացրեց քրմապետը, որ հէնց որ Ռամզէսի սիրտը կըդադարի բաբախելուց—առնի նրա մատանին...

—Շնորհակալ եմ ձեզանից, ասաց Գորուսը, ցաւում եմ... ա՜խ, ինչպէս եմ ցաւում... Բայց չէ՞ որ ես ամբողջովին չեմ մեռնիլ... ինձնից յետոյ կըմնան ժողովրդի օրհնութիւնը, խաղաղութիւնը, երջանկութիւնը... և... իմ Վերոնիկան կըստանայ ազատութիւն... Դեռ երկա՞ր է տևելու, հարցրեց նա բժշկից։

—Մահը գտնւում է քեզնից հազար գինւորական քայլ հեռու, պատասխանեց տխուր ձայնով բժիշկը։

—Եւ դուք չէ՞ք լսում, ոչ ո՞ք չէ գալիս այն կողմից, հարցնում էր Գորուսը։

Լռութիւն։

Լուսինը մօտենում էր արմաւենուն և արդէն շօշափել էր նրա առաջին տերևները։ Մանր աւազը մեղմիկ սօսափում էր աւազէ ժամացոյցի մէջ։

—Հեռո՛ւ է, հարցրեց Գորուսը։

—Ութը հարիւր քայլ, պատասխանեց բժիշկը...

—Ես չըգիտեմ, Գորուս, արդեօք դու այժ կունենաս մատանիով կնքել բոլոր հրովարտակները, եթէ մինչև անգամ մատանին բերած լինէին։

—Տուէք ինձ հրովարտակները, արտասանեց թագաւորազնը, ականջ դնելով արդեօք չէ՞ վազում մէկը Ռամզէսի ապարանքներից։ Իսկ դու, քրմապետ, ասաց նա բժիշկին, ինչքան է մնում ինձ ապրելու, որպէս զի կարողանամ վաւերացնել ինձ համար ամենաթանգագին հրովարտակները։

—Վեց հարիւր քայլ... շշնջաց բժիշկը։

Ծողովրդի հարկերը թեթևացնելու և ստրուկների աշխատանքը քչացնելու հրովարտակն ընկաւ Գորուսի ձեռքից.

—Հինգ հարիւր...

Եթովպացիների հետ հաշտութեան դաշն կապելու հրովարտակը սլքւեց նրա ծնկների վրայից։

—Արդեօք ոչ ոք չէ՞ գալիս...

—Չորս հարիւր... բացագանչեց բժիշկը։

Գորուսը մտածման մէջ ընկաւ և... Զեփիւռի նշխարները տեղափոխելու հրովարտակը ընկաւ։

—Երե՞ք հարիւր...

Նոյն բախտը վիճակւեց Յետրոնի աքսորադարձի հրովարտակին։

—Երկո՛ւ հարիւր...

Գորուսի շրթունքները կապտեցին։ Կծկւող ձեռքով նա վայր ձգեց հրովարտակը, որն արգելում էր գերի առածների լեզուները կտրել. մնաց միայն Վերոնիկալի ազատման հրովարտակը։

—Հարիւր...

Մեռելային լռութեան մէջ լսեցին սանդալների ձայները։ Դահլիճը ներս վազեց քրմապետի տեղակալը. Գորուսը տարածեց ձեռքը։

—Հրա՛շք... դուռս եկւորը։ Մեծ Ռամզէսի առողջութիւնը վերադարձաւ... Նա վեր կացաւ առոյգ կերպով անկողնից և արևածագին արդէն ուզում է առիւծների որսի գնալ... Իսկ քեզ, Գորուս, իբրև ողորմածութեան նշան, պատւիրում է ուղեկցել իրան...

Գորուսը ձգեց իր հանգչող հալեացքը նեղոսի մեւս կողմը, որտեղ պսպղում էր Վերոնիկալի բանտի ճրագը... և երկու արցունք, արիւն արցունք գլորւեցին նրա այտերի վրայով։

—Դու չէ՞ս պատասխանում, Գորուս... հարցրեց եկւորը զարմացած։

—Մի՞թէ չես տեսնում, որ նա արդէն մեռած է... շշնջաց Կառնակի ամենախմաստուն բժիշկը։

Ա. ՐՑՈՒՆՔՆԵՐ

—

Կան արցունքներ, որոնք որ
Սրտի թունոտ վէրքերից
Աչքերի մէջ են լցւում,
Եւ ծանրացած և պղտոր
Ինչպէս աշնան ամպերից
Պանդաղ անձրևն է իջնում—
Կաթ կաթ թափւում են միայն...

—

Նրանք դեռ չեն մթնեցրել
Այն աչքերը սիրավառ,
Որոնց միայն հրճւանքի
Պայծառ շողերն են գգւել
Եւ կրծքի տակ վշտահար
Ծնւում են միշտ թունալի
Թշւառութեան մէջ միայն...

ԵՐՈՒԱՆԴ ՊԱՂԱՆ

ՅԱՌԱՋ

(Նադսոն)

—

Գնա դէպ առաջ, տանջանք մոռացիր,
Փոթորկի հանդէպ դու մի՛ ընկճւիր.
Կռւիր ծագելիք նոր լոյսի համար,
Որ փայլ արձակեց դիշերում խաւար։
Աշխատիր քանի զօրեղ են կռները,
Եւ մի՛ կորցրու ոսկէ վառ յոյսեր։
Յանուն գիտութեան և վառ լոյսի դու
Պարզիր քո ազնիւ կերոն լուսատու։
Թո՛ղ քեզի պատժեն, ցոյց տալով զզւանք,
Թո՛ղ թափէ վրադ անմիտ անարգանք
Կատաղած ամբոխի կանխահաս վճիռ,
Գնա՛ քո շաւղով, դու մի՛ վհատիր.
Ծանրատար կեանքի բոլոր փոթորկին
Մատաղհաս կուրծքդ վստահ դու դէմ դիր։
Զարթեցրո՛ւ խորը մթնում քնածին,
Օգնութեան ձեռք տո՛ւր անոյժ ընկածին.
Եւ բարձր խօսքը վեհ ճշմարտութեան
Ինչպէս կենաց լոյս ծագիր ամբոխին։

Գ. ՓԱՍ. ՄԿՐՏՈՒՄԵԱՆՑ

1893 Թ. Հոկտ. 9
Վլլոր.

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ. «Արեւելեան Դիմաքսեանի», վէպ («Մուրճ» 1893 Թ. №№ 1—6. և առանձին գրքով)։

Վէպը բաժանւում է երեք մասի, համաձայն Դիմաքսեանի սիրոյ երեք շրջանների։ Առաջին մասը վերջանում է սիրելիի կորուստով.—Գայիանէն ամուսնանում է Բարաթեանի հետ։ Այդտեղ մանր կրքերի և տանջանքների բռնկումն է, որ աւարտւում է մեր հերոսի հիւանդութեամբ. հրաբուղխը ժայթքում է։ Երկրորդ մասի մէջ Դիմաքսեանի համար ակնարկ է դառնում Գայիանէի հիասթափումը—տիկինը իմանում է որ ամուսինը իրան դաւաճանում է։ Ժայթքած հրաբուղխը՝ Արսէնի սիրտը այդ շրջանում սկսում է հաշտւել կորցրած սիրոյ, խածած ինքնասիրութեան, վիրաւորւած օձի հետ։ Բայց ահա Գայիանէի առելութիւնը դէպի Բարաթեանը և յարգանքը դէպի Արսէնը ամուսնուց բաժանւելը և այն շրջանին մօտենալը, որը թանկ է Արսէնի համար—այս ամենը բորբոքում են վերջին անգամ մեր հերոսի մէջ անհատական երջանկութեան ցանկութիւնը—նա կուզէր սիրել Գայիանէից և նոյն իսկ ամուսնանալ նրա հետ։ Նրա ծրագիրները քանդւում են—Գայիանէն չի համաձայնւում նրա ամուսին դառնալ. անձնական երջանկութեան յոյսը տապալւած է և Արսէնը դառնում է հանգստութիւն, բախտաւորութիւն ընդհանուրի, հասարակութեան բարօրութեան և առաջադիմութեան մէջ։ Դրանով վերջանում է գրւածքի երրորդ մասը։

Այն, որ վէպը բաժանւած է մասերի համաձայն Դիմաքսեանի սիրահարութեան պատմութեան երեք շրջանների և այդ շրջաններով է կատարւում վէպի գլխաւոր հերոսի ոգեկան փոփոխութիւնը, մի նոր ապացոյց է թէ Նիրվանզադէի գլխաւոր միտքը եղել է ոչ թէ նկարագրել երկու կուսակցութիւնների կռիւը,—այդ չէ վէպի գաղափարը,—այլ զննել Դիմաքսեանի ոգեկան աշխարհի զուտը, հասարակական ինստինկտների—բնազդումների յաղթութիւնը այդ աշխարհում՝ անհատական ինստինկտների դէմ։

Երիտասարդների մի խմբի հետ միաժամանակ կեանք է մտնում Արսէն Դիմաքսեանը ոգեկան այն առաւելութիւններով և պակասութիւններով, որ արդէն մատնացոյց ենք արել։ Նրան բարեկամ են Բարաթեանը և Վէքիլեանը, Մաներեանը և Սալամբէկեանը։ Նա տապարէզ է դալիս ոչ իբրև նորելուկ. «Ձեր անունը ձեղնից առաջ է մեզ հասել»—յայտնում է նրան Ներսիսեան պալրոցի հոգաբարձուն, երբ Արսէնը դիմում է նրան խնդրելով մի պաշտօն այդ դպրոցի մէջ։ «Կային մարդիկ, որ իրանք էին ձգտում նրան (Արսէնին) մօտենալ։ Նոյն իսկ մի քանի ընտանիքներ փափագ էին յայտնում նրան իրանց յարկի տակ տեսնել։

—Բերէք ձեր օրիդինալին մեզ մօտ, ասաց մի օր տիկին Բախտամեանը»։

Դիմաքսեանը արդէն յայտնի էր դառել թէ իր ընկերների պատմածների պատճառով և թէ նրա համար, որ «Ղեւ դիմնազիօնի նստարանից նա աշխատակցում էր մի լրագրի։ Գնալով արտատոհման՝ նա չարունակից աշխատակցել նոյն լրագրում, հետզհետէ ընդարձակելով դրութեան շրջանը և գաղափարը։ Վերջին ժամանակ նա քաղաքական յօդւածներ էր գրում առաջ Լէյպցիգից, յետոյ Ցիւրիխից» (9)։

Դիմաքսեանի մօտ Թիֆլիսում խոկոյն կազմւում է մի ընկերական շրջան յիշւած բարեկամներից—և այդտեղ խօսւում էր թէ ինչպէս ձեռք ձեռքի տւած խորտակել չինական պատը հայոց կեանքի մէջ. «խորտակենք նրան, որ անջատում է մեզ եւրոպական քաղաքակրթութիւնից»։ Բայց արդէն այդտեղ նշմարելի էր որ հասարակական կեանքի վատ երեւոյթներին միատեսակ չեն վերաբերւում ընկերները. մինչդեռ սրտի բոլոր զօրութիւններով բողոքում էին դրանց դէմ Արսէնը, Մաներեանը և Սալամբէկեանը, հարւածում էին դրանց, Բարաթեանը միայն «հեգնում էր և ծաղրում», իսկ «Վէքիլեանը ժպտում էր, ամենքի հետ համաձայնելով»։

Ներսիսեան դպրոցում «ուսուցչական շրջանն Արսէնին ընդունեց արտաքին յարգանքով, ներքին նախանձով, որովհետև ամենատաղանդաւոր ուսուցիչն էլ նրա մէջ տեսնում էր մի զօրեղ մրցակից»։ Բայց նրա մտնելովը «խաղաղ և ճահճացած շրջանի մէջ ընկաւ մի տեսակ շարժուձեւ»։—«Պարոններ, մեր դպրոցում բարոյական դիսցիպլինա չկայ, պէտք է այս մասին հոգալ—«Այս դպրոցում տիրում է հին հոգի, պէտք է ամեն ինչ փոխել, վերանորոգել, պէտք է այստեղի օդը մաքրել»։

Եւ Դիմաքսեանը հասնում է այնտեղ, որ ուսուցչական խումբը ընտրում է մի մասնաժողով, յանձնելով նրան կազմել մի ծրագիր դպրոցում անելիք փոփոխութիւնների մասին։

Դիմաքսեանը պատրաստում է այդ ծրագիրը, որի մէջ «հիմն ի վեր պախարակում էր դաստաւորութեան ներկայ դրութիւնը, ուսուցիչների յարաբերութեան ձեւն աշակերտների հետ»։

—Դուք էք, պարոններ, դուք, դիմում էր նա ուսուցիչներին, որ մանուկ հասակից աշակերտին սովորեցնում էք անպայման հնազանդութեան, ձեր կամքի, ձեր խելքի, ձեր հասկացողութեան, ձեր դատողութեան օբէնքներին... Ի սէր ազատ բնութեան, թոյլ տւէք աշակերտի անհատական ոյժերն անկախ զարգանան, միայն հետեւեցէք, որ նրանք չըվիժանան վատ ուղղութեամբ։ Անպայման բացակայութիւն խստութեան—ահա իմ առաջարկած դիսցիպլինան։

Ամեն տեղ, բոլոր քարոզչութիւնների մէջ Դիմաքսեանն այս «ազատ բնութեան», «անհատականութեան» լիակատար զարգացման կողմնակից է։

Մանկավարժական ժողովի մէջ նա այդ սկզբունքը պաշտպանում էր աւելի քան զգուշաւած կերպով։

Դպրոցում «անմիջապէս վարմւեց համակրողների մի խումբ և Դիմաքսեանն աշակերտների չրջանում էլ կողմնակիցներ ունեցաւ»։ Եւ երբ վողոցի դրան մօտ, մութ անկիւնում հաւաքւած մի քանի հասակաւոր աշակերտներ գաղտնի ծանրահարեցին նրան—նա ոգեւորւեց, սրտում զգաց մի ուրախութիւն»։ Եւ ահա այդ սրտում զարկեց «վառասիրութեան երակը»։

Այդ երեկոյ ընկերական չրջանի մէջ Արսէնը պատմեց թէ ինչպէս իր ծրագիրը մի կողմից ծաղրի ենթարկւեց,

միւս կողմից՝ համակրանքի։ Այստեղ Մոկրեանը հրատարակում է մի սկզբունք, որև է վէպի սկզբունքը։

—«Կեցցէ՛ վիշտը, որ մաքրում է մարդուն, ինչպէս կրակը ոսկուն»։

Թէև դպրոցում մի քանի ուսուցիչներ ծաղրել են ծրագիրը, բայց չէ՛ որ համակրանք էլ կայ, աչակերտների ծափահարութիւններն էլ է վաստակած, ամենամտերիմ ընկերների հիացմունքն էլ։ Եւ չատ բնական է, որ ընկերների հեռանալուց յետոյ նոր տպաւորութեան ներքոյ, աղմկալի խօսակցութիւններից դրդռած ջղերը չեն թողնում Դիմաքսեանին քնանալ. նրա վառասիրութիւնն արթնացել է արդէն առաջին աջողութիւնից յետոյ, բորբոքած միտքը զբաղած է ապագայով։

«Այն բազմաթիւ դաղափարները, որ բարդել էին նրա գլխում, գործադրութեան եկք էին որոնում։ Մի ներքին հոգեկան այժ վառում էր նրա սիրտը անդուսդ եռանդով։ Թուում էր նրան թէ կեանքը չատ կարճ է այդ բոլոր գաղափարների մի չնչին մասն անգամ իրագործելու համար։ Տակաւին քսան և վեց տարեկան էր և զգում էր, թէ արդէն չատ ժամանակ է կորցրել ապարդիւն։ Եւ նախանձը զբաղուում էր նրա սրտում՝ երբ յիշում էր այն անմահ մարդկանց, որոնք պատանեկական հասակում արդէն անուն էին վաստակել։ Բայց ինչ փոյթ, դեռ ժամանակ կայ, և ինքն էս կըվաստակի մարդկային մաքի և խելքի զեկավարի զօրաւոր անունը և՛ կանմահացնի նա այդ անունը, և՛ ապագայ սերունդները կըզրոչմեն նրան պատմութեան էջերում։ «Ներկայութիւնը տանում է Արաէնին հեռու, հեռու այդ փառասիրական ձգտումների մէջ, և յանկարծ նրա հայեացքը ընկնում էր իր փոքրիկ մարմնի սուերի վրայ։ Օ՜, որքան հակասութիւն մի րոպէ առաջ երևակայած վհռութեան և այդ կարճ սուերի մէջ։ «Նա զգաց մի ցնցում և ոտն ամուր խըփեց յատակին։ Նա ինքն իրան թուաց այնքան փոքր, այնքան աննշան, այնքան ողորմելի, որ վրդովւեց։ Օձն արթնացաւ։

Դիմաքսեանը ծանօթանում է Բախտամեանների ընտանիքի հետ, ուր պատահում է պարոն Բախտամեանի քրոջ աղջկան—Դայիանէին։ Այդ աղջիկը սկսում է գրաւել մեր հերոսին, բայց նա դուր է գալիս և Բարաթեանին, որ ուզում է ամուսնանալով այդ օրիորդի հետ՝ կապւել պարոն Բախտամեան ընտանիքի հետ ու նրա միջոցով մտնել քաղաքային և բանկային գործերի մէջ։ Ո՛վ կըզրաւի օրիորդի սիրտը—դեղեցիկ, զարմանաշոս և զարթ Բարաթեանը, թէ ազնիւ, լրջմիտ և մարմնով տկար Դիմաքսեանը։ Դրանց մէջ սկսւում է մրցում։

Դիմաքսեանը Բարաթեանի հետ միասին Բախտամեանների մօտ է։ Եւ տիկին Բախտամեանի և օրիորդ Դայիանէի ուշադրութիւնը գրաւել է Բարաթեանը, այդ անախորժ է Դիմաքսեանի համար, նա իրան այստեղ կարծես տւելորդ է զգում։ Այդ րոպէին նա իմանում է որ կանոնց բարեգործական ընկերութիւն է հիմնւում և որ նախաձեռնութիւնը պատկանում է Բարաթեանին։ «Այս նորութիւնը Դիմաքսեանի սրտում զարթեցրեց մի տեսակ անախորժ զգացում։ Ի՞նչպէս նա, որ այնքան պաշտպանել է և պաշտպանում է կանոնց խնդիրը, յանկարծ հեռու է մի գործից, որ կանոնց ինքնուրոյնութեան առաջին քայլն է որոշում։ Ահա ինչ ասել է հասարակութիւնից հեռու ապրել։ Նա անբաւական էր իրանից։ Բայց նրա յուզմունքը սաստկացաւ, երբ իմացաւ որ ապագայ ընկերութեան կանոնադրութիւնը կազմող մասնաժողովի անդամ է ընտրւած և՛ Բարաթեանը։ Եւ մինչդեռ ինքը աչխատում էր լինել Բարաթեանի պէս զարթ, անփոյթ, համարձակ այս փոքրիկ հասարակութեան մէջ, նրան այդ չէր աջողուում։ Նա զգում էր, ինքն էլ չըգիտէր ինչու, որ կաչկանդւած դրութեան մէջ է։ Եւ թէև օրիորդը յարգանքով էր լսում նրա լուրջ խօսակցութիւնը, բաւական էր Բարաթեանի մի աչխարհիկ դարձւած, մի սուր նկատողութիւն, մի թեթև, անփոյթ հեգնութիւն և օրիորդը անկեղծ ծիծաղում էր, զրաււում էր։ Դիմաքսեանը ուզում էր մասնակցել այդ ծիծաղին, բայց նրա ծիծաղը կեղծ էր հնչում, կատակը բռնազբօսիկ։ Եւ ահա այդ անաջողութեան պատճառը թուում էր նրան որ իր կազմւածքն է, տգեղ, այլանդակ կազմւածքը, թէև օրիորդը ոչ մի կերպ, բացի յարգանքից, ոչինչ ցոյց չէր տալիս նրան։ Եւ չըկամենալով աւելի երկար տանել այդ տանջանքը, նա դուրս եկաւ Բախտամեանների մօտից, նրա ինքնասիրութիւնը զրկւած էր, նա չատակից բաժանւել Բարաթեանից, որը դուրս էր եկել նրա հետ միասին, և չարացած չատակից կառքով տուն, որովհետև փողոցում, լուսաւորւած խանութների առջևով Բարաթեանի հետ կից առ կից անցնելով, նա նկատեց այն ասրսափելի տարբերութիւնը, որ կար իր և Բարաթեանի արտաքինի մէջ։—Մի վայրկեանում տակն ու վրայ եղաւ նրա սիրտը։ Եւ Դայիանէն ուշք չի դարձնում նրա՝ Դիմաքսեանի վրայ, «մինչ այն պատճառով, որ նա փոքրիկ է, աննշան, տգեղ»։

Արաէնը սկսեց անց ու դարձ անել իր սենեակում։ Եւ այդ րոպէին նորս է մտնում նրա մօտ իր ծառան՝ Սերականը, որը աւելի տգեղ էր կազմւածքով, աւելի այլանդակ։ Արաէնին կարծես հաճելի էր դիտել այդ մարդուն։ Նա անցնելու ժամանակ այնպէս մօտենում էր ծառային, կարծես ուզում էր համեմատել իրան նրա հետ. եղաւ մի րոպէ, երբ նա անգամ կանգ առաւ Սերականի կողքին, մօտեցրեց իր ուսը նրա ուսին, «նայեց նրա աչքերին, ճակատին, կրծքին, և ճարպիկ չարժւածքով հեռանալով նրանից՝ թոյլ ձայնով արտասանեց.—Ինչ կարճ ես, Սերական, և բարձրաձայն ծիծաղեց։ Դա մի անսովոր ծիծաղ էր, մի ծիծաղ, որի մէջ չէր զգացւում ոչ ծաղր, ոչ դառնութիւն. և ոչ զարմանութիւն, այլ մի տեսակ բարկութիւն՝—բարկութիւն այն օրէնքների դէմ, որ իրան այնքան տգեղ էին ստեղծել։ Այդ ծիծաղի մէջ ամփոփւեցին այդ երեկոյ կրած նրա բոլոր տանջանքները և դուրս վիժեցին. այնուհետև նա հանդստացաւ և նըստելով պարապելու, խորասուզւեց մտաւոր կեանքի մէջ. նա պատրաստում էր մի դասախօսութիւն—«մեր երկրի արդիւնաբերական-տնտեսական դրութեան մասին, և կամաց կամաց մտնը ինստինկտները քնեցին նրա սրտում։

Այդ դասախօսութիւնը նա կարդալու էր յօգուտ կանանց նոր հիմնւած ընկերութեան։ Եւ այն րոպէին երբ նա իր մի քանի ամիսների աչխատանքով ուզում էր գոնէ մի փոքր գրաւել Դայիանէին, ցոյց տալ իր առաւելութիւնը Բարաթեանի վրայ, նա յանկարծ լսում է տ. Բախտամեանից, որ Բարաթեանը տալիս է նոյն նպատակով մի ներկայացում և որ այդ ներկայացումն աւելի

չատ եկամուտ կըտայ քան թէ դասախօսութիւնը։ Այդ անսպասելի նորութիւնը չատ վատ հնչեց նրա ականջին։ Եւ երբ նա դիմացի հայելիի մէջ յանկարծ տեսաւ իր կերպարանքը—նա մի անորոշ ցնցողական չարժում գործեց։ «Ախ, որքան նա պատիկ և անշնան էր այդ րոպէին իր աչքում։ Փափուկ բաղկաթոռը ագահութեամբ ամբողջովին կլանել էր նրան, և միայն երևում էր նրա խոշոր գլուխը»։ Նրա ինքնասիրութեան զգացումը, այդ օձը յուզուեց նրա մէջ։ Անսիրտ օրիորդ, ինչու՞ չես ճանաչում քո դէմ նստածին։ Մի՞թէ կարծում ես, այդ փոքրիկ մարմնի մէջ նըստած հոգին նոյնպէս փոքրիկ է։ Ո՛չ, դու պէտք է ճանաչես Դիմաքսեանին, պէտք է զգաս նրա մտքի և հոգու զօրութիւնը»։ Արաէնը գունատ էր, նա ոտքի կանգնեց անսպասելի կերպով և սկսեց հրաժեշտ տալ Բախտամեաններին։ Սառն օդի մէջ, նա ուշքի եկաւ, զգաց որ չփոթուած է և այդ րոպէին յանկարծ սլարզուեց իր համար—որ «այդ օրիորդը ինձ խելքից պէտք է հանի»։ Այդ սէրը նա տառապել բորբոքուում էր, որ անյոյս էր։

Այդ զգացմունքը չէր թոյլ տալիս Դիմաքսեանին զբաղուելու այնչափ, որչափ ուսաջ. Նա այժմ յաճախ է դուրս գալիս զբօսնելու Մսերեանի հետ։ Եւ կարծես ամեն տեղ նա պիտի զդար իր մարմնի տկարութիւնը։ Սառած մայթի վրայ նա յանկարծ սայթաքուում է և անչուշտ կընկնէր, եթէ Մսերեանն իր ուժեղ ձեռքով չը բռնէր նրա թևից։ «Արաէնը ծիծաղեց ինքն իր վրայ, բայց ոչ այնպէս, ինչպէս ծիծաղում են ակամայ սուռուցի վրայ սայթաքողները։ Այդ արհեստական ծիծաղով նա քօղարկում էր իր փոքրիկ մարմնի թերութիւնից առաջացած բնական վրդովմունքը»։ Եւ հազիւ նա գլուխը բարձրացրեց—դէմ ու դէմ գալիս էլին Բարաթեանը, ուրախ, զարթ, դեղեցիկ, առոդջ՝—Գայիանէի հետ։ Արաէնի ծնկները դողացին այդ զոյգի անհոդ քաքիջի հնչիւններից, նրա ինքնասիրութիւնը թևալդրում էր զսպել չըփոթութիւնը և նա դարձեալ ծիծաղեց—այժմ աւելի անբնական, աւելի բռնի կերպով, բայց նրա չրթունքները և երեսի կաշին ցնցուում էին։ Իբր թէ տաքանալու համար ընկերները մտնում են կաթնատուն։ Այստեղ մի փոքրիկ հասարակութիւն վիճում է եկեղեցու և ազդի մասին, և այդ տաք վիճաբանութիւնների մէջ Դիմաքսեանը լսում է ինչպէս մի կողմը հիմնուում է իր՝ Դիմաքսեանի գրածների վրայ, իր անունն է յիշուում։ «Այդպէս ուրեմն, արդէն նրա մասին խօսում են, նրա խօսքերն ապացոյց են բերում, նրա առաջ խոնարհուում են։ Ահա խելքի ոյժը։ Եւ ով է կարող այսուհետև ասել թէ նա կոչուած չէ հասարակական մտքի առաջնորդ դառնալու» և Արաէնը մոռացաւ մի րոպէ առաջ կրած անախորժ զգացումները։ Այդ վայրկեանին նա վճռում էր թէ պէտք է դործել, դործել—և կըզայ ժամանակ, երբ ամենքը կը խոնարհուին նրա հանճարի առաջ։ Սիրել մէկին, ինչու՞, քանի որ կարելի է սիրել ամբողջ մարդկութիւնը։ Բայց երբ նա տուն հասաւ, նորից ներկայացան նրա առաջ առաջուայ պատկերները—Բարաթեանն իր աջողութեամբ, և նորից խեղդում էր նրան այն «վատնդաւոր ցեղը, որ սկսել էր ուտել նրա սիրտը և որի անունն էր նախանձ»։ Որչափ փոքր են, մանր են այդ ինսաիներները մի մարդու մէջ, որ հասարակական դործիչ է ուզում լինել։

Հասնում է դասախօսութեան օրը. Դիմաքսեանը գրաւում է ընդհանուրի ուշադրութիւնը։ Բայց երբ սկըսուում էր երկրորդ բաժանմունքը, երբ նա նկատեց Բախտամեանին օրիորդի հետ, նա գունատուեց, այլայլուեց, սրտի խորքում մի անատնելի զգացում չօչափեց... «Նա յանկարծակի զրգուեց և՛ Բարաթեանի դէմ, և՛ օրիորդի դէմ, և՛ ամենքի դէմ։ Այժմ նրան թուում էր, որ բոլորը կեղծում են, բոլորը նեղքուսա ծաղրում են նրան, համարում են մի տեսակ խենթ»... և հազիւ կարողացել էր նա զսպել իրան, յանկարծ հայեացքը ընկաւ Բարաթեանի և օրիորդի վրայ։ Նա տուում էր մէկ ինչ որ բան Գայիանէին, իսկ օրիորդն երեսը հովհարով ծածկել էր, որ ծիծաղը հասարակութիւնից ծածկի։

«Ինչու՞, ում վրայ, մի՞թէ նրան են ծաղրում։ Օօ, այդ արդէն յանդդնութիւն է։ Ի՞նչպէս, նրան չեն յարգում նոյն իսկ այն միջոցին, երբ նա կատարում է իր բարոյական պարտքերից մինը»։ Նա կորցրեց իր խօսքերի կապը, բայց վերջապէս ուշը ժողովեց, գտաւ խօսքի թելը, չարունակեց, բայց բոլորովին տարբեր և տարօրինակ եղանակով։ «Նա չէր դասախօսում, այլ վիճում էր. գիտութեան չէզոք քարոզիչը փոխուել էր կրքոտ հարւածողի»։ և նրա հարւածներն ուղղած էին կրթուած երիտասարդութեան, ինտելիգենցիայի անտարբերութեան դէմ... Այս անդամ նրան քիչ ծափահարեցին։ Սիրտը դառն զգացումներով լի, ինքնասիրութիւնը խոցոտուած, նա հեռացաւ բեմից. Նա միայնակ էր. միայն Մսերեանը մնաւ նրա մօտ։—Ախ, Մսերեան, ես դժբախտ մարդ եմ։—Դու ամենաբախտաւոր մարդը կըլինես։

ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆՑ

(Կըշարունակուի)

ՄԱՀԱԴՈՅԾ

—

† Երկու անփոխարինելի կորուստ իրար ետևից։ Երաժշտական աշխարհը կորցրեց երկու ամենավայելուչն աստղեր. երկու շաբաթ առաջ Պարիզում վախճանուեց յայտնի կոմպոզիտոր Գունոն, այս շաբթին, Հոկտ. 25-ին Պետերբուրգում խոլերային զոհ գնաց ոչ միայն Ռուսիայում, այլ ամբողջ Եւրոպայում հըռչակ ստացած ռուս կոմպոզիտոր Չայկովսկին։ Ում յայտնի չէ նրա անմահ «Եւգենի Օնեգին» օպերան. մի շարք օպերաներ «Օրլեանի կոյսը», «Մազեպան», «Ինաճ գեղեցկուհին» և այլն նրա պսակի անթառամ տերևներն են կազմում։

Գեղեցիկ կրթութիւն ստացած լինելով, նա իր մեղմ բնաւորութեամբ զմայլեցնում էր ամեն մէկին, որ առիթ էր ունենում նրա հետ ծանօթանալու։

Նա դեռ երկար տարիներ կարող էր ծառայել իր հայրենիքին և ամբողջ մարդկութեանը. նա վախճանուեց 54 տարեկան հասակում։

Միլիոնաւոր տանջուած, յոգնած սրտեր հանգստութիւն են վայելել և դեռ երկար տարիներ կըվայելեն անմահ երգչի հնչիւնները լսելիս. հանգիստ և քո ոսկերաց, մեծ երաժիշտ։

—

ԹԱՏՐՈՆ

—

Երկուշաբթի, Հոկտեմբ. 25-ին Թիֆլիսի մշտական դերասանական խումբը ներկայացրեց երկրորդ անգամ Ֆ. Օնէլի «Պարբնապետ» դրաման յօգուտ Հայուհեաց Բարեգործական ընկերութեան։ Այդ երեկոյ Թիֆլիսի արիստոկրատիան բարեհաճել էր այցելել թատրոն։ Բոլոր տեղերը բռնուած էին։ Պիեսի մասին արդէն խօսել ենք, դերակատարութեան մասին՝ նոյնպէս, կրկնել մեր ասածը աւելորդ ենք համարում, մանաւանդ որ դերակատարները նոյնն էին, ինչ որ այդ պիեսի առաջին ներկայացման ժամանակ։

Հինգշաբթի, ամսիս 28-ին ներկայացեցաւ Լրգուվէի «Բէատրիս» դրամա-կոմեդիան։ Պիեսն չունի առանձին բեմական արժանաւորութիւններ։ Բովանդակութիւնը հետաքրքրական է։ Մեծ դուքս Ֆրիդրիխն (Աբելեան) և հռչակաւոր դերասանուհի Բէատրիսը (Տ. Հրաչեայ) սիրահարուում են։ Ֆրիդրիխն առաջարկում է իր ձեռքը, բայց Բէատրիսը հրաժարւում է, ի նկատի ունենալով, որ այդ ամուսնութիւնը կարող է զրկել Ֆրիդրիխին իշխանական իրաւունքներից և հետևաբար՝ նրա հպատակներին բարի և օրինակելի կառավարողից։ Այսպիսով Բէատրիսը իր սէրը զոհում է մեծ դքսութեան հպատակների բարօրութեան։ Տ. Հրաչեան Բէատրիսի դերը կատարեց վերին աստիճանի ջերմ, զգացած և մտացածին կերպով։ Առհասարակ բոլոր դերասանները կատարեցին իրանց դերերը շատ լաչող, այնպէս իր ընդհանուր անսամբլը շատ լաւ տպաւորութիւն թողեց ունկնդիրների վրայ։ Այնպէսման լաւ էր պ. Սրաքսեանը թէ իր գրիմով և ընորոշ խաղով։ Ժողովուրդն ընդունում էր բոլոր դերակատարներին բուռն ծափահարութեամբ։ Բացի դրանից տ. Հրաչեան ստացաւ կենդանի ծաղիկներից մի զամբիւղ։

—

«ՎԱՇԽԱՌՈՒ» պիեսը Ատրպատականում.

Հոկտեմբերի 18-ին ձմերայնի թատրոնում դերասան Ալաբեանը երկար տարիներ չըխաղալուց յետոյ՝ տուեց մի ներկայացում։ Խաղաց նոր պիես «Վաչխառուս» վերնագրով «Վաչխառուի» նիւթը իբրև թէ վերցրած է Ատրպատականի կեանքից և պատկանում է մի ոմն Քալաչեանի գրչին։

Պիեսի դլխաւոր բովանդակութիւնը հետևեալն է. մի ոմն վաչխառու Կուտիկեան կեղծ թղթեր, մուրհակներ չինելու համար պատժւում է բանտարկութեամբ, բայց այդ վճիռը նրա վրայ այնպիսի ազդեցութիւն է անում, որ նա լսելուն պէս՝ մեռնում է։ Կուտիկեանը ունենում է մի կին, աղջիկ և տղայ, որ ուսանելիս է լինում համալսարանում։ Վերջին տարին վաչխառուն փող չի ուղարկում իր որդու համար. և Կուտիկեանի որդին ստիպւած կըլինէր համալսարանը թողնել, եթէ չօգնէր նրան իր դասընկեր Մալխասեանը։ Վերջին գործողութեան մէջ Դէորգը—վաչխառուի որդին համալսարանն աւարտած, դալիս է տուն և հօրը կենդանի չըտեսնելով՝ քննում է նրա գործերը և գտնելով հօր վերցրած տոկոսների անարդարացիութիւնը՝ կամենում է նոր դարձնել։ Այստեղ Դէորգը սկսում է օգային ամրոցներ չինել և ազդի ցաւերի վրայ վայել,—բայց դեռ ինքը ոչինչ չարած՝ պատկառում է Ցիւրիխում աւարտած իրան բոլորովին անտես անճանաչ օրիորդի հետ։ Իր քրոջն էլ տալիս է իր ընկեր Դարեդինի Մալխասեանին։

Պիեսը դրւած է վերին աստիճանի խամ դրչով, ոչ մի գործ չկայ մէջը, որ վոխարէն պիեսը լիքն է մտքի հակասութիւններով և քերականական սխալներով։ Մանաւանդ Քալաչեանը կամենալով դրել Ատրպատականի բարբառով և չըկարողանալով այդ անել, դուրս է բերել մի այնպիսի խառն լեզու, որ մարդու ծիծաղն է գրգռում։ Օրինակ՝ առաջին գործողութեան մէջ Դարեդինն ասում է. «Ամեն ուսանողի պարտքն է օգնել իր ընկերը, նոյնպէս էլ ծնողքը չըթողնել ուսումը թեզի իւր որդուց»։

Մի ուրիշ տեղ՝ «ինչպէս է, լաւ ա, էս տարի կըբրձնի ուսումը»... Մի այլ տեղ՝ «ուսումն հարկաւոր է թէ երիտասարդներին, այլ և ծերին, տղայոց և աղջկերանց»։ Դարձեալ՝ «դուք մեր օբչեստային ինչ օգուտ էք բերում»։ Քալաչեանը կարծել է, որ տեղական բարբառը դուրս բերելու համար, բաւական է միայն գրել այն օտարամուտ բառերը, որոնք վխտում են Ատրպատականի բարբառում.—Իսկ ոճը, բարբառի առանձնայատկութիւնը նշանակութիւն չեն ունեցել հեղինակի համար։

Գալով ներկայացման՝ կասենք այսքան, որ Ալաբեանը «Վաչխառուի» դերը կատարեց այնպիսի ազդեցութեամբ, որ պիեսի բոլոր պակասութիւնները ծածկուեց, և նա չատ անգոյն տեղերը լրացնում էր իր խաղով։ Միւս դերակատարներից լաւ էին միայն Քարատաչեանը, մանաւանդ երկրորդ գործողութեան մէջ, իսկ վերջին գործողութեան մէջ նա չատ էր տաքանում։

Ս.

—

Ներկայացում Ղզլարում. «ՄԱՅՐԱԿԱՆ ՍԷՐ».

Կիրակի, հոկտեմբերի 17-ին տիկ. Զաբէլը պ. պ. Սահակեանի և Աբրահամեանի հետ տեղական սիրողների մասնակցութեամբ տուեց Ղզլարում երրորդ ներկայացում. խաղացին «Մայրական սէր» դրաման հինգ գործողութեամբ. ներկայացումն ընդհանրապէս կենդանի անցաւ, ամբողջութիւնն յայտող, տեսարանները կարգին և վայելուչ կերպով սարքած. դերակատարների խաղը հասարակութիւնը հաւանում էր. այդ օրւայ ներկայացումն այն տեսակ տպաւորութիւն էր թողել ամբողջ հասարակութեան վրայ, որ ամբողջ երեք օր տեղացիները խօսում էին դրա վրայ. թատրոնը կատարելապէս լիքն էր, վերջում չատերը տոմսակ չըգտնելով՝ հետ գնացին տները։

Զորրորդ ներկայացումն լինելու է ամսիս 27-ին. խաղալու են «Անջելլո» և «Աչնանային երեկոյ գիւղում» պիեսները։ Այդ ներկայացման տոմսակները հէնց հիմիկւանից ծախւած են և հասարակութիւնը պատրաստւում է մի նէր տալու տ. Զաբէլին։

Վ.ԱՐԴ-ՄԱՆ

—

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

—

Անցեալ անգամ հաղորդել էինք Էջմիածնում տեղի ունեցած վոխիխութիւնների մասին։ Այդ առիթով նոր տեղեկութիւններ ենք ստանում, որ ուրիշ լոյս են սփռում ներկայ անցքերի վրայ։

—

Թէև Էջմիածնի վանքի մէջ յայտնի

չրջաններում խօսւում է, որ Վեհափառը նչանակում է Նահապետ աբեղայ Նահապետեանին վանքի ընդհանուր վերատեսուչ, մինչև օրս Վ. Հայրիկը այդ մասին ոչ մի կարգադրութիւն չի արել։

—

Պ. Սեդրակ Մանդինեանը դեռ ևս մնում է Երևանի թեմական դպրոցում իբրև տեսուչ։ Ն. Վեհափառութիւնը դեռ չէ վճռել վերջնականապէս հրաւիրել նրան Ձեմարանի տեսչի օգնական և այդ մասին ոչինչ չէ կարգադրել։

—

Ն. Վեհափառութիւնը կանչել է Սահակ վ. Բաղդասարեանին և յայտնել թէ չնորհնակ վարդապետը, լինելով Մակար կաթողիկոսի քարտուղար, լաւ գիտէ վեհարանի գործերը և կարող է հարկաւոր լինել։ Բայց մինչև օրս ոչ բանաւոր և ոչ էլ գրաւոր կարգադրութեամբ Սահակ վարդապետը նչանակուած չէ կոնդակագիր կամ քարտուղար։

—

Վեհափառ Հայրիկը կարդալով տեղական հայ լրագիրների մէջ իբր թէ տեղի ունեցած փոփոխութիւնների մասին, նկատել է՝ «Ըշտէ ադ մարդիկ իրանց ցանկացածը կըթելդրեն ինձ»։ Այդ լուրերն այնպիսի համոզմունքով և հաստատամտութեամբ էր կրկնում տեղական ամբողջ մամուլը, որ «Տարագն» էլ արտատպեց։

—

Թիֆլիսում ստացած մասնաւոր տեղեկութիւններից իմանում ենք, որ Ն. Վեհափառութեան կարգադրութեամբ Մեսրոպ քահ. Մելիանը, Երևանի նախկին թեմական տեսուչը, նչանակուած է նոյն պաշտօնով Իմերէթի և Վրաստանի թեմի վրայ, իսկ Իմերէթի և Վրաստանի ներկայ թեմ. տեսուչ Ղևոնդ քահ. Դեղամեանը տեղափոխւում է նոյն պաշտօնով Շամախու թեմը։

—

Այն լուրը թէ Մեսրոպ ք. Մելիանի փոխարէն Երևանի թեմական տեսուչ նչանակուած է Մեսրովբ ք. Գեօնջեանցը՝ հերքւում է. այդ թեմի ծխական դպրոցների կառավարութիւնը մի առ ժամանակ լինելու է Երևանի առաջնորդական փոխանորդի անմիջական իրաւասութեան ներքոյ։

—

Իբրև լուր հաղորդում ենք, որ Էջմիածնի միաբան Գալուստ սարկաւագ Մկրտչեանին Վեհափառը յանձնել է կազմել «Արարատ» ամսագրի վերանորոգութեան ծրագիրը և ներկայացնել Իրան ի հաստատութիւն։ Ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին, Գալուստ սարկաւագը աւարտել է Ձեմարանը և այնուհետև Պարիզի հասարակական գիտութիւնների ինստիտուտը, ուր ստացել է առաջնակարգ վկայագիր։ Մեր գրականութեան մէջ նա յայտնի է իր մի քանի պատմական հետազօտութիւններով, որոնք մանաւանդ լուսաբանում են Մովսէս Խորենացու պատմութեան բնագիրը և աղբիւրները։ Այդ հետազօտութիւնները դրաւել են օտար գիտնականների ուշադրութիւնը։

—

Էջմիածնից հաստատ աղբիւրից հաղորդում են, որ Վեհափառ Հայրիկը հրամայել է պ. Կարա-Մուրզայի ամբողջ տարեկան ռոկը վճարել։

—

Ակաթքալաք հասել է Արսէն աբեղայ Դլոնճեանը, որ Վեհափառ Հայրիկի անօրինութեամբ նչանակուած է Թիֆլիսի թեմի եկեղեցիների, երեսփոխանների, դործակալութիւնների և այլոց դրամական հաչիւները քննելու։

—

Դերբենդից մեզ հաղորդում են, որ այնտեղ այս ամառ չնորհիւ պ. ոստիկանապետի՝ բացւից պատուհներ չորացնելու դործարան, սակայն այդ դործարանը այս վերջի օրերս դադարեցրեց իր գործունէութիւնը։ Յաւօք սրտի պէտք է ասենք, որ այդ մասնագիտութիւնը ժողովրդի մէջ ոչ մի հետաքրքրութիւն չըշարժեց և ինչպէս որ նա բացել էր, այնպէս էլ փակուեց, չատերը մինչև անդամ չ'իմացան էլ, թէ Դերբենդում մի այդպիսի դործարան է բացւել։ Մինչդեռ պատուհները չորացնել չըդիտենալով, տեղական այգեստէրերը, երբ պատուղը հասնում է, աչխատում են որքան կարելի է չուտով դլխից դադ անել— ծախել, որ չըփչանայ։ Դրա հետևանքն այն է, որ պատուղները ծախւում են չատ էժան դնով։

—

Դերբենդի ուսումնարանը դեռ վաղ է. սրանից մի-երկու չաբաթ առաջ թեմական առաջնորդը հեռագիր էր ուղարկել, իբր թէ ուսուցիչներ արդէն ուղարկուած են, բայց մինչև օրս դեռ դերբենդցիները չեն արժանացել դրանց երեսը տեսնելու, թէև ճանապարհները չատ լաւ են, ծովը հանդիստ է։ Ժողովուրդը սաստիկ վրդովւած է այս բանից և ուզում է սինոդից հրաման ստանալ ինքը հրաւիրելու ուսուցիչներ։

—

Ղզլարի քաղաքագլուխ պ. Սերեբրեակեանը, Պետերբուրգից վերադառնալով, իսկոյն քաղաքային խորհրդի արտակարգ նիստ դումարեց և առաջարկեց Ղզլարը երկաթուղու գծով միացնել Պետրովսկիի երկաթուղու հետ։ Այդ առաջարկութեանը բոլորը համաձայնեցան և վճռեցին, Վլադիկաւկազի երկաթուղու վարչութեանը յատկացնել 2000 ռուբլի Ղզլարի երկաթուղու համար ճանապարհներ սրոնելու համար։

—

Խորէն պատրիարքի անակնկալ հեռագրով, հոկտ. 8 ռուսական չորեքնաւով մեկնեց դէպի Կ. Պոլիս, Տրապիզոնի և միացեալ վիճակների առաջնորդ Տ. Եղիշէ ծ. վ. Այվազեան, որ հազիւ 20—25 օր է՝ նոր վերադարձել էր Տրապիզոնի թեմի ամբողջ արևմտեան մասը, Ջարչամպա, Իւնիա և այլն և այլն այցելելուց և պատրաստւում էր Կիւմիշխանէ երթալ, ուր ազգային դործերը խառնաչփոթ վիճակի մէջ են։ Կ. Պոլիս կանչելու պատճառը յայտնի չէ. սակայն նոյն իսկ պատրիարքի հեռագրից կասկածում են, որ վերջի տարիներս ամենօրեայ դարձած թիւրք կառավարութեան կասկածանքի տրդիւնք է։ Եղիշէ վարդապետ վարչական ինչ թերի կողմեր էլ ունենայ, անկարելի է չըխոստովանել, որ հասարակ ժողովուրդը նրան չատ է սիրում (թերևս անշուշտ իր փքուն ձևերի և առատաձեռնութեան համար). և այսօր սաստիկ յուզած է նրա յանկարծակի մեկնելու համար։

—

Տրապիզոնի արևմտեան կողմը գըտնւող քաղաքական հիւանդանոցի և դինւորանոցի մէջ խօլերայի մի քանի դէպքեր են պատահել, ըստ վկայութեան տեղական բժշկների. (բայց մի ֆրանսիացի բժշկից, որ խօլերին է ասում) և արդէն այնտեղից մեկնող նաւերի համար Սինոպ 24 ժամ կարանտին է նչանակւել, ճանապարհին ոչ մի նաւահանգստի չըհանդիպելու պայմանով։ Եթէ իրօք այսը

խօլերայ է, անչուչտ կըտարածւի քաղաքիս մէջ, քանի որ հասարակ ժողովուրդը ոչ մի միջոց չունի նրա դէմ կռւելու համար։ Արդեօք Տրապիզոնը միջնորդ կըհանդիսանա՞յ խօլերայի տարածման դէպի Ակը-Հայաստան.—այդ այժմից անկարելի է ասել. բայց ուրչափ խախուտ են թըրքական հռչակաւոր կարանտինանները, և որչափ ձևական ու կեղծ են ձեռք առնւած զգուշական միջոցները, այդ արդէն անցեալ տարւայ փորձը յաստուկ ցոյց տւաւ։

—

Անցեալները Նւպատորիայի նորաբաց ծխական դպրոցին այցելութեան են գնացել մի քանի պատւաւոր կանայք, և առաջարկութեամբ պ. Յակոբ աղա Սէֆերեանի՝ նւիրեցին 200 ռ., այն է՝ այրի Թերևզա խաթան Սէֆերեան—100 ռ., Եղիսաբէթ Յակ. Սէֆերեան—50 ռ., Կատարինէ Մղդեսեան—15 ռ., Հռիփսիմէ Սէֆերեան —10 ռ.։ Այս նպաստը մի աղքատիկ դպրոցի համար քիչ նպաստ չէ։

—

Նւպատորիայում Վեհափառի Օծման օրը տօնւել է հանդիսաւոր կերպով։

—

Նւպատորիայում խօլերայ է նրևացել. մեռնողների թիւը մեծ է, մի քանի դպրոցներում դասատւութիւնն անորոշ ժամանակով դադարեցրւած է։

—

Այսօր, ամսոյս 31-ին, բացւելու է Թիֆլիսի զինւորական թանգարանի դահլիճում «Կեղարւեստական ցուցահանդէս»։ Սա յիսւով երրորդ անգամն է։

—

Այսօր, ամսոյս 31-ին, կատարւելու է Թիֆլիսի քաղաքագլխի ընտրութիւնը։ Այդ պաշտօնին առ այժմ տրւում էր միայն նախկին քաղաքագլուխ իշխ. Աբղուլթեանի և պ. Իզմայլեանի անունները։ Որովհետև առաջինը վճռողական կերպով արդէն հրաժարւել է քէֆարկւելուց, հաւանական է որ քաղաքագլուխ ընտրւի պ. Իզմայլեանը։

—

Ահա մի քանի օր է ինչ որ Թիֆլիսի Քաղաքային Վարչի ընկերութեան նորընտիր պաշտօնատար անձինք արդէն ստանձել են իրանց պաշտօնները, ընդունելով բանկային գործերը։ Ա.ռ այժմ պ. Տէր-Ասատուրեան կատարում է ընկերութեան վարչութեան նախագահի պաշտօնը և երկու Մ՝իրզոյեանները դիրեկտորների պաշտօնները. Վերահսկող մասնաժողովի ընտրւած հինգ անդամները և վերաքննիչ մասնաժողովի մի նորընտիր անդամը մտել են իրանց պաշտօնների մէջ։

—

Նոյեմբերի 14-ին նշանակւած է Քաղաքային Վարչի նոր ընդհանուր ժողով՝ Ընկերութեան նախագահ, մի դիրեկտոր և գանձապահ ընտրելու, եթէ նախկին գանձապահ Ն. Տիգրանեանի իրաւունքները չեն վերականգնեցնի ապրիլի 11-ի ընդհանուր ժողովի վճիռը քանդելով։

—

Նոյեմբերի մէկից Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը Թիֆլիսում կըսկսի հրատարակել ռուսաց լեզւով նոր շաբաթաթերթ՝ «Կովկասեան Գիւղատնտեսութիւն» անունով։ Շաբաթաթերթի նպատակն է սերտ կապը հաստատել Կովկասեան Գիւղատն. ընկերութեան և Կովկասի գիւղատնտեսների մէջ՝ գիւղատնտեսական հարցերը ընդհանուր ոյժերով մշակելու համար և տարածելու ժողովրդի մէջ գիւղատնտեսական գիտութիւնները։ Ծրագիրը բազմակողմանի է կազմւած։ Այդ շաբաթաթերթում բացի առաջնորդողներից գիւղատնտեսական այլևայլ ճիւղերի վերաբերեալ հարցերի մասին, կըտպւեն գիւղատնտեսների զեկուցմունքներն իրանց արած փորձերի մասին և այլն։ Ի միջի այլոց ունենալու է շատ հետաքրքիր և օգտաւէտ բաժին, այն է «Հարցեր և պատասխաններ», որի մէջ կըզետեղւեն մասնագէտների պատասխաններն այն հարցերի, որոնցով դիմելու են խմբագրութեանը կամ Գիւղատնտեսական ընկերութեանը։

—

Օր չի անցնում, որ Թիֆլիսում մեկին չըթալանեն, չը կողոպտեն, չըսպանեն։ Համարեա ամեն օր մի քանի դեպք է պատահում ծառաների ձեռքով իրանց տէրերի տները կողոպտելու։ Երևի ծառաները մտածում են թէ իրանք ինչով են պակաս։

—

Կովկասում աւազակութիւնն արմատախիլ անելու համար, Կովկասի կառաւարչապետին շնորհւած է իրաւունք յանձնելու զինւորական դատաստանին և հաստատելու սրա դատավճիռները այն յանցանքների, որոնք վերաբերում են նախամտածւած սպանութիւններին, կողոպտելուն, տների կրակ գցելուն, և որոնք կատարւում են ընիկների ձեռքով, ինչ ազգութեան էլ պատկանէին նրանք։

—

Ինչպէս հաղորդում են Պետերբուրգի ռուսական թերթերը, առաջիկայ 1894 թւից փոստով փող ուղարկելու ձևի մէջ փոփոխութիւն է մտնելու։ Փողը փոխանակ մի տեղից միւս տեղը ուղարկելու, գրամների փոխադրութիւն կըլինի այնպէս, ինչպէս այժմ փոխադրւում են բանկերի միջոցով կամ ինչպէս վաճառականները ասում են «բարաթներով»։ Սկզբում փոստայով փոխադրելու գումարը կը սահմանափակւի 1000 ռուբլով։

—

Պետերբուրգում հիմնւած է գործարան զանազան մրգերից հոտաւէտ թանձր հիւթեր պատրաստելու օդին և զանազան խմիչքները համեմելու համար։ Մինչև այժմ այդ տեսակ հիւթեր ստացւում էին Գերմանիայից, որ մաքս աւելացնելու պատճառով Ռուզանովները և ընկ. հիմնեցին այդ գործարանը Ռուսաստանում։

—

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

—

ՂԶԼԱՐ. Ղ. „Մարգկային ախտերի տեսութեան մասին“ Թարգմանական յօդւածը չի ապագրւիլ։

ԲԱԳՈՒ. Ալէքսանդր Ահարոնեանին։ Ընդունւեց յա հնէք պ. Եփրանդ Պալեանին։

ԷՋՄԻԱՑԻՆ. Անահիտեանին։ Շարունակեցէք. մանաւանդ հաղորդեցէք լուրեր։

ԲԱՂԱԹԱՆ. Ժամանակին Ճաշարանների կառավարչներին։ Սառցանը ձերը՝ ի օ թ լինժիներների ստորագրութեամբ նամակը, որով խնդրում էք նւիրել „Աղբիւրի“ մի օրինակ Ճաշարանների ընթերցարանին։ Մեզ թւում էր, որ միակ դասակարգը, որ ներկայ դասում աղատ է մնացել այդ տեսակ

Հնչէն կնդրկներով գիմելուց գա՝ ինչ-ժ-ե-ն-և ը-ն-ե-ր-ի պատակագին է... մարգագուլա գոհէ մի-մի շայլ ուզաբ-կէկը ամագրի Ձ-ա-ն-ա պ-ա-ր-կ-ա-ծ-ա-լ-ս-ի. համոզած ենք, որ գուք երբ-ևէ ը-ն-ժ-ե-ն-ե-ր-ի-ն-ե-ր լորթի աչքով չէք նայել Ձ-ա-ն-ա պ-ա-ր-կ-ա-ծ-ա-լ-ս-ի վրայ։ №№-ը ուղարկում ենք։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Ց. Մինչև—Ղկլարի պատասխանատուները մասին աւելի մանրամասն պիտի տպագրէր „Տարազ“ № 34-ում։ Մենք գիտենք, որ Յովհաննէս Լալայեանցին միայն մի քանի ալանիր են հեռագրել, որ նա երբեք պատգամաւոր՝ ներկայանայ Ն. Վեհափառութեան... Մնալ-ա-ս... այդ մարդիանց գոլծելու եղանակը միշտ նոյնն է...

ՄԵՐՎ. Ա. Քայլ ձեղանից ուրիշներից ևս բողոքներ ենք ստացել այն լուրի դէմ, որ իբր Թէ Աբշակ Թումանեանը պատգամաւոր է եղել ընտրած Մերվ հասարակութիւնից Ն. Վեհափառին ներկայանալու։ Թո՛ղ գոհէ այդ սեռակ շինծու լուրերով մխիթարուին, գա ոչ առաջինն է և ո՛չ վերջինն է լինելու։

ԿԱՐՍ. Ա. Հ. Շաբաթականեցէ՛ք։

ՇԱՄԱԽԻ. Պ. Ն. Անցեալ սաբաթ №№-ը, որոնք գուրս են եկել մինչև նոյեմբերի մէկը, մեզ մօտ չըկան։ պէտք է գիմել անմիջապէս պ. Տէր-Գէորգեան Նազարեանին։

Չեր երկրորդ լուրը վերին աստիճանի հետաքրքիր է, բայց...

ՍՈՒԽՈՒՄ. Մ. Չեր գրւածն անկեղծ է, թէ որպէսի դամակրուելեանից ենք վերաբերուել մենք դէպի ձեր անկեղծութիւնը—գրաւոր ապացոյց կըսանանք վստայով։

ՇՈՒՇԻ. Տ. Ո. Խնդրում ենք „Ազա՛զիշ“-ի բնագիրն ուղարկել։ Այսպէս գժ-ա-ր-ա-ն-ում ենք ապագրելու։

ՂԶԼԱՐ. Լ. Մ. Չեր ամիսս 4-ի նամակը չենք ստացել։

ԹԷՀՐԱՆ. Մարդ. Ցաւում ենք, ուշացել է։ Մենք ղրկած էինք վիջոյկը—երբ ժամանակին անգամ ստացած տեղեկութիւնները հաղորդելու։

ԹԱՎԼԱՐ. Թաղլարի հայոց ուսումնարանի ուսուցչէ Սա. Սահակեանցին։ Աբժիշկ արգելք ամին մի սուտ լուր հերքելու։ Սրևէ միայն անհատներին են կարծում, որ Թումանի տեսչին ուրիշի անուն նով գուք հեռագիրը էք խմբել,—այդ պիսիներին անձամբ կարող էք համոզել։

ԹՐՆԱՎ. Խաժակինեանին։ Գժքախտաբար չըյաջողուեց, ինչպէս անձամբ ձեզ ասել էինք, մեր նախագուշակութիւնները կատարուեցան։

ՉԵՆ ՏՊԱԳՐԻՒԻ. Ոամանաւորին ը. 1) Վերջին ժամ 2) Իմ առաջին անգամ որպէս գնալը. 3) Հայրիկն Հայրենեաց Հայոց և 4) Օձման հանդիսը Թիֆլիսում։

—

Այն անձանց ազգանունները, որոնցից մեր բաժանորդները կարող են ստանալ «Ազբիւր-Տարազի» երկրորդ նւէրը՝ «Վեհափառ Հայրիկի պատկերը»։

—

Ախալցխա.—Օր. Եղիսաբէթ Տէր-Մովսիսեան։

Արդէն.—պ. Մկրտիչ Ազնաւուրեան։

Աբասթուման.—պ. Աղէքսանդր Զ. Հախնազարեան։

Ալէքսանդրապոլ.—պ. Յովհաննէս Կոստանեանց։

Ամարախան.—պ. Կարապետ Դաւթեան։

Արմաւիր. – պ. Վախթանգ Նալբանդեան։

Ախալքալաք.—պ. Զալալ Յով. Տէր-Գրիգորեան։

Ալդահան.—պ. բժ. Թ. Զաքարեան։

Արմեանսկի Բազար.—պ. Սիմէօն Առ. Բաբիեանց։

Ասխաբադ.—պ. Ալէքսանդր Ա.ագեան։

Ա.քքերման.—պ. Մայիլեանց։

Ամտրաբադ.—Եղբ. Փանեանցներ։

Աստարա.—պ. Գասպար Եղանեանց։

Բագու, Բալախանի, Սև քաղաք—պ. Մարգար Գասպարեանից։

Բաֆում.—պ. Աբէլ Ապրեսեանց։

Մեծ-Ղարաքիլիսա.—Հ. Արսէն ա. ք. Տէր-Սիմոնեանց։

Վլադիկաւկազ.—պ. Արտեմ Կիրակոսեան։

Վաղարշապատ.—պ. Պետրոս Սուքիասեան։

Վերին-Ագուլիս.—պ. Սարգիս Հախնազարեան.

Վարշաւա. – պ. Յակոբ Երեսփոխեան։

Գրիգորիոպոլ- – պ. Զատիկեան։

Գորիս.—պ. Աստուր Եօլեանց։

Գորի.—Հ. Ստեփան ա. ք. Տէր-Ստեփանեան։

Զալալ Օղլի.—Ծխակ. դպրոցի պ. աւագ ուսուցչից։

Դիլիջան.—պ. Սարգիս Յովակիմեանից և պ. Արտաշէս Սիմոնեանից։

Դերբենդ.—պ. Սարդար Խաղուլեանց։

Դանձակ.—պ. Յակոբ Լիսիկեան։

Եկատերինոդար.—պ. Ա. Ն. Թամանցեանց։

Եւպատորիա.—պ. Յ. Բարոնեան։

Իգդիր.—պ. Աստուածատուր Բաբաջանեան։

Կուշչևսկայա.—պ. Գրիգոր Դիլանչեան։

Ղամարլու.—պ. Կ. Սարուխանեան։

Կարս.—Հ. Խորէն ք. Ստամբոլցեան։

Կարասու-Բազար.—պ. Յով. Բենգլեարեան։

Ղզլար.—Հ. Գէորգ ք. Մկրտումեան։

Կաղզման.—պ. Զաք. Մ. Զանպոլադեան։

Քութայիս.—Հ. Յովսէփ ք. Ամիրաղեան։

Մոսկւա.—պ. Աղէքսանդր Ծատուրեան (տպարան Մ. Բարխուդարեանի)։

Մոզդոկ.—պ. Գրիգոր Լիսիցեանց։

Մեղրի.—պ. Սիմոն Անանեան.

Մերվ.—պ. Արտեմ Թումանեան։

Մալկոպ.—պ. ագարակատէր Աւետիս Կ. Աւետիսեան։

Նոր-Բայազետ.—պ. ուսուցիչ Մինքայէլ Մնացականեան։

Հին Նախիջևան.—պ. Կոնստանդին Վ. Պօղոսեան։

Նուխի.—պ. Յակոբ Ա.Հարոնեան (փոստատուն)։

Նոր Նախիջևան.—Յովհաննէս սարկ. Զարիֆեան։

Օդեսա.—պ. Պօղոս Կոնսուլով (Բազարնայա փ. տ № 49)։

Պեատիգորսկ.—պ. Բաղդասար Խոջայեան։

Փոթի.—պ. Յովհաննէս Թիւրքեան։

Պետերբուրգ.—ուսանող պ. Միքայէլ Կուզանեան։

Ռոստով.—պ. Ղ. Պ. Էստատեան (Դմիտրևսկայա տ. № 49)։

Սուխում.—պ. Ս. Ֆրանգուլեան.

Սղնախ.—պ. Աղա Զաք. Փաբեմուզեան։

Ստաւրոպոլ.—պ. ուսուցիչ Սուքեասեան։

Սարըղամիշ.—եղբ. Չիլինգարեաններ։

Սիմֆերապոլ.—տ. Թէրեզա Սեֆերեան։

Թէհրան.—պ. Սիմէօֆ Մ. Պետրոսեան։

Թաւրիզ.—պ. Աբրահամ Մելիք Աբրահամեան.

Չիկիշլեար.—պ. Բաղիշ Ներսիսեան։

Շուշի.—պ. Պօղոս Զաքարեան։

Շուլաւէր.—պ. Վախթանգ Մեհրաբեան։

Շամախի.—պ. Պօղոս Ներսիսեան։

Երևան.—պ. Գեղէօն Ա. Հարոնեան։

Այս անձանց մօտ նաև ծախւում են «Վէհափառ Հայրիկի» պատկերները—1 ռուբլի—50 կոպ. և—30 կոպ. և «Գր. Արծրունու» պատկերները—30 կ.

Ժամանակ. Խմբ. Վ. ՍՈՒԼԹԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻԿԱՅ **1894** ԹԻԱԿԱՆԻՆ

22-ՐԴ ՏԱՐԻ **„ՄՇԱԿ“** 22-ՐԴ ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակւի Թիֆլիսում, նոյն դիրքով, նոյն պրոգրամայով և նոյն ուղղութեամբ։ Մենք ստանում ենք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ։ տւանը՝ 9 ռ., ինն և ութ ամսւանը՝ 8 ռ., եօթ ամսւանը 7 ռ., վեց ամսւանը՝ 6 ռ., հինգ ամսւանը՝ 5 ռ., չորս ամսւանը՝ 4 ռ., երեք ամսւանը՝ 3 ռ., երկու ամսւանը՝ 2 ռ., մէկ ամսւանը՝ 1 ռուբլի։

Գրւել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բաբոնակայա և Բազարնայա փողոցների անկիւնում)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գըրւելու համար պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“, իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK»։

—

Յայտարարութիւնները ընդունւում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով. բաւին վճարւում է 2 կոպէկ։

—

Ներկայ 1893 թ. նոյեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի վերջը «Մշակին» բաժանորդ գրւողները վճարում է 2 ռուբլի։

Թիֆլիսի ԱՅԳԵՓՈՐԾԱԿԱՆ ուսումնարանի Մանկավարժական խորհուրդը յայտարարում է, որ ընդունելութեան համար քննութիւնները նշանակւած են ուսումնարանում սոյն Հոկտեմբերի 29-ին։

3—3

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Թաղլար գիւղի եկեղ. ծխական ուսումնարանի հոգաբարձութիւնը և նոյն գիւղի ուսումնարանական չինութեան մասնաժողովը իրանց անհուն չնորհակալութիւնն են յայտնում հետևեալ անձանց, որոնք չեն խնայել իրանց ժամանակը և միջոցը նպաստելու Թաղլարի ուսումնարանի չինութեան գործին։ Ստացել են նիւթական նպաստ.

1. Ղազարէ Ոսկանեանից քսանհինգ (25) ռուբլի, որը հանգանակած է Բագուում. 2. Մովսէս Գասպարեանից հարիւր եօթանասուն (170) ռուբլի, որը պարոնը հանգանակել է Թէհրանում 3. Սիմէոն Բաղրեանից երեսուն (30) ռուբլի, որը հանգանակել էր պարոնը Թիֆլիսի աղչոկ վեսաւածներից օգտին. պ. պ. Նէլբատուներից անուն և ազգանուններ. Միքայէլ Փանեանց—5 ռուբլի, Կոստանդին Կոստանդինեանց—5 ռ., Սիմէոն Բաղրեանց—5 ռ., Իւան Թումայեանց—2 ռ. 50 կոպ., Աւարեր Մխոբլեանեանց—1 ռ. և զանազան անձնիցներից, որոնք մէկ ռուբլուց պակաս են տւել—11 ռուբլի 50 կոպէկ։

Ի դիմաց հոգաբարձութեան՝ Բախշի Ս. Ղազարեանց և Միքայէլ Զաքեանց

Ի դիմաց ուսումնարանական շինութեան մասնաժողովի՝ ուսուցիչ Սահակ Սահակեան

Մամուլի տակից լոյս տեսան Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութեան հետևեալ հրատարակութիւնները.

1) «Դրախտի Ընտանիք», Խրիմեան Հայրիկի, չորրորդ տպագրութիւն. գինն է 50 կոպ.։

2) «Սիրաք և Սամուէլ», Խրիմեան Հայրիկի, չորրորդ տպագրութիւն. գինն է 50 կոպ.։

3) Չորրորդ մոգը. Վան Դէյկի, գինն է 5 կոպ.։

4) «Խուն-Խոր.» Յակ. Ղազարեանի, գինն է 60 կոպ.։

5) «Էլգուջա», Մուչխուբարիձէի գինն է 45 կոպէկ։

6) «Հանրամատչելի աստղաբաշխութիւն» Փլամմարիօնի, գինն է 1 ռուբլի։

Դիմել Ընկերութեան գրատեղեակը, Баронск. ул. д. Саакянца, կամ կենդրոնական գրավաճառանոցը։

«Աղբիւր-Տարազի» գրասենեակում
Վաճառւում է
ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ

ՄԿՐՏԻՉ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՀԱՅՐԻԿԻ ՄԵԾԱԴԻՐ ՊԱՏԿԵՐԸ

Ամենավերջին լուսանկարից հանած։ Ցինկոգրաֆիական կլիշէն պատրաստուած է Վիեննայի Անգերերի նշանաւոր գործարանում։

ՊԱՏԿԵՐԻ ԳԻՆՆ Է. Բրիստոլի կէս սուպերթղթի վրայ 1 ռուբլի, մէջակ թղթի վրայ՝ 50 կոպ. և հասարակ թղթի վրայ՝ 30 կոպ.։ Դումարով առնողներին զեղչ։ Ծանապարհածախքը գրասենեակի վրայ։

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՇԻՐՎԱՆԶԱԴԷԻ

ԱՐՍԷՆ ԴԻՄԱՔՍԵԱՆ

Վ Է Պ Ը

Վաճառւում է հեղինակի մօտ. Тифлисъ, Ширванзадэ. Грибоѣдовская, д. № 7.

Գինն է ճանապարհածախսով 1 ռ. 50 կոպ.։ Գրավաճառներին զիջումով։

10—9

Вера, Вторая Кирпичная улица, д. Алтеровича № 3.

Այս հասցէով տանը երեք ամսուայ ընթացքում սովրեցնում են շրջազգեստի (դեքլէի) ձևագիտութիւնը. կարել իմացողներին 10 ռուբլիով, իսկ կարել չիմացողներին 15 ռուբլիով։

Բայց տղի շորի ձևագիտութիւնը սովրել ցանկացողները պիտի վճարեն նաև 5 ռուբլի։ 5—5

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են *ատեստատներ*։

Ասանդելի առարկայք սորա են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրայ, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) Գեղագրութիւն։

Ուսումը սկսւելու է սեպտեմբերի 15-ից, ընդունելութիւնները սեպտեմբերի 1-ից, ամեհայն օր, երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Աղէքսանդր Փրիդօնօվի տանը, № 9 Սերգիէվսկայա և Նագորնայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ԶՐԻԱՊԵՍ եղբ. Յովհաննիսեանների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են կուրսերի հիմնողին.—въ Тифлисъ, С. П. Мануэльянцу. 12 — 12

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

—

Թիֆլիս, 1893 ամի հոկտեմբերի 11-ին։ Մենք ներքոյ ստորագրեալներս՝ Նիկողայոս Էնակոլոփեան և Վահան Մամիկոնեան յայտարարելով Թիֆլիսու հայ թատրոնական 1892—93 սեզոնի համառօտ հաշիւը, որով զուտ արդիւնք մնացել է երկու հարիւր տասն և չորս ռուբլի ութանասուն և երեք կոպ., վճռեցինք այդ գնովը գնել մի 5% տոմս երկրորդ ներքին փոխառութեան նոյն գումարի արժողութեամբ և առնելով այդ տոմսն եղբայրք Յովհաննէսեանների առևտրական անից սէրի 17775 № 44, յանձնել Թիֆլիսու Առևտրական բանկին յօգուտ հայ թատրոնական ակումբի, ստանալով անուանեալ բանկի ներկայացուցիչներից անդորրագիր և այս մեր կայացած վճռի մասին յայտ առնել Թիֆլիսի ամեն լրագիրներում։

Նիկողայոս Էնակոլոփեան
Վահան Մամիկոնեան

ՄԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ

Կամենում է դասեր տալ միջնակարգ դըպրոցի ԲՈԼՈՐ առարկաներից, ստանալով ԲԸնակարան և ճաշ, կամ միայն ճաշ։ Կարող է հասակաւորների հետ պարապել ընդհանուր գիտութիւններից և գերմաներէնից։

Հասցէն թողնել «Տարազի» խմբագրատանը։

Печ. ценз. Тифлисъ, 30 октября 1893 г. Հրատ. Տ. Նազարեան. Тип. Груз. Изд. Т-ва. Л.-Мел. ул. д. № 31